

Հովհաննես ԳԻՍՍԻԱՆԱԿԵՐՏՅՈՒՆ «ՔԵՐԹՈՂԱԳԱՆ ԱՐՎԵՍՏԻ» ՇՈՒՐՋ

Ա. Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

Միջնադարյան հայ պատմիչների գլխավոր մտահոգություններից մեկը եղել է իրենց գործերը գեղեցիկ գրականության հատկանիշներով օժտելը¹։ Նրանք կարևոր տեղ են տվել խոսքի արտաքին կողմին, աշխատել են, որ այն լինի բարձրավետ, գեղեցիկ և ազդու՝ ըստ յուրաքանչյուր դարաշրջանի ընկալումների և պատկերացումների։

Այս միտքը հիմնավորվում է նաև այն իրողությամբ, որ մեր թարգմանական գրականության առաջին նմուշներից եղան հունական իրականության մեջ պատկանելի ավանդույթ ունեցող խոսքարվեստի մասին տեսական-ուսուցողական բնույթի ձեռնարկները, ինչպես՝ Դիոնիսիոս Թրակացու և Թեոն Աղեքսանդրացու գործերը², «Պիտոյից գիրքը»³։ Քերթող պատվանվամբ են մեծարվել նրանք, ովքեր կատարյալ են եղել քերականական (միջնադարյան նշանակությամբ) գիտության մեջ, խոսքի արվեստում (աթճառի և հատկապես չափածո) ընդհանրապես, նրանց մեջ կատարելագույնը կոչվել է քերթողաճալ, նրանց արվեստը՝ քերթողական արվեստ։ Այս առումով քերթողություն տերմինը ընգրկում և զիպուկ բառով է մեկնվում Փիլոն Աղեքսանդրացու «Նախախնամության» Հովհաննես Սարկավազին վերագրվող⁴ լուծմունքում. «քերթողն արուեստախօսութիւնն է»⁵։

Պատմագրական հուշարձաններում տարբեր ժամանակներում և տարբեր հեղինակների մոտ «քերթողական արվեստի» ունեցած ազդեցությունները և դրսևորումները պարզելը խիստ կարևոր է պատմական սկզբնաղբյուրների ճիշտ հասկանալու, արժեքավորելու և այլ առումներով։

V դարից հետո հայ մատենագրության հարաբերական տեղատվությանը հաջորդած կրկին ծաղկման առաջին ներկայացուցիչներից է X դարի առաջին բառորդի Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին։ Նրա «Հայոց Պատմության» մասին նույնիսկ համառոտ խոսքում հետազոտողները միշտ շեշտել են, որ նա գրում է «քերթողական արվեստով»։ Այգ են հուշում ոչ միայն նրա «Պատմության» լեզուն և ոճը, այլև իր իսկ ուղղակի և անուղղակի հետևյալ վկայությունները. կաթողիկոս պատմիչը խոստանում է իր «Պատ-

¹ Ս. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, տե՛ս նրկեր, հատ. Գ, Երևան, 1968, հատ. Գ, Երևան, 1970։

² Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915. Թ է ո վ ն ե ա ՝ Յաղագս ճարտասանական կրթութեանց, աշխատասիրությամբ Հ. Մանանդյանի, Երևան, 1938։

³ «Մովսեսի խորենացույ մատենագրութիւնը», Վենետիկ, 1865, էջ 342—381։

⁴ Գ. Գրիգորյան, Փիլոն Աղեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները, Խաթերի Մատենադարանի, № 5, էջ 95—116։

⁵ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 245բ։ Այս վկայության մասին շնորհակալությամբ իմացանք Ա. Շ. Մնացականյանից։

մոլորությունը՝ գրել այնպես, որ շտապալի «գեթեթողացն արուեստը»⁶։ Նա շատ րարձր է գնահատում Հովհաննես Օձնեցի իմաստասեր կաթողիկոսի մատենագրական գործունեությունը՝ հատուկ շեշտելով, որ վերջինս հմուտ և տեղյակ էր «բալուր ֆեթեթողական շարագրածաց»⁷ (էջ 100)։ Մեղադրական երանգ կարելի է նկատել իր ավագ ժամանակակից պատմիչ Շապուհ Բաղրատունու «Պատմությունը» նրա տված գնահատականում (ըստ Դրասխանակերտցու, նա գրել էր ոչ «ըստ ֆեթեթողական հրահանգացն», այլ «գեղջուկ բանի» (էջ 131—132)։ Այս բոլորը հիմք են տալիս մտածելու, որ Դրասխանակերտցու պատմագրի իդեալը հղել է «քերթողական արվեստին» հմուտ լինելը և նա աշխատել է իր «Պատմությունը» շարագրել ըստ վերջինիս պահանջներին։

Հարց է ծագում՝ ինչպե՞ս է ինքը՝ Դրասխանակերտցին ընկալել և իրացրել այն երևույթը, որն անվանում է «քերթողական արվեստ»։

Թվում է, թե այս հարցը պարզելու ամենաբնական միջոցը նրա «Պատմությունը» լեզվի, ոճի, խոսքի կառուցման մեթոդների վերահսկումն է քերթողական տեսական գրականություն՝ քերականական ու ճարտասանական բնույթի վերոհիշյալ ձևերից։ Սակայն այս ճանապարհը հաղիվ թե անհրաժեշտ արդյունք տա։ Այդ բնագավառի գրականությունը լավ ծանոթ լինելը, առավել ևս դրանց պահանջներով առաջնորդվելը չափազանց թույլ է արտահայտված մեր այս շրջանի պատմագրության մեջ, մի փաստ, որ զարմանքով է արձանագրել ղեռ Ադոնցը՝ Դիոնիսիոս Թրակացու կապակցությամբ⁸։ Մինչդեռ ավելի հին շրջանի մատենագիրների մոտ կարելի է նկատել այսօրինակ ձևերից կանոնների և պահանջների կիրառում⁹։ Բանն այն է, որ այս բոլոր ձևերը, գրված լինելով շատ ավելի վաղ, հայ իրականություն էին մուտք գործել (թարգմանվել հայերեն) մեր դպրության արշալույսին, և IX—XI դդ. պատմագիրների համար դժվարամարս էին ոչ միայն իրենց բովանդակությամբ, այլև լեզվով՝ խրթին հունաբան հայերենով¹⁰։

Սա, իհարկե, չի նշանակում, թե Դրասխանակերտցին, կամ նրա նման մեկ ուրիշը անտեղյակ կարող էր լինել վերոհիշյալ գրականությանը։ Այսպես, Դրասխանակերտցու «Պատմությունը» մեջ Ադոնցը նկատում է երեք դեպք, որոնք ըստ ամենայնի վկայում են հեղինակի փաստական ծանոթության մասին Դիոնիսիոսի գործին, նաև Արիստոտելին և Պորփյուրին¹¹։ Հետաքրքրական

6 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 5։ Բոլոր վկայակոչումները և մեջբերումները կատարում ենք այստեղից, որ արտատպված է Մ. էմինի 1853 թ. հրատարակությունից։ Այսուհետև միայն տեքստում փակագծերի մեջ կնշվեն համապատասխան էջերը։

7 Տպագրում՝ շարագծաց։ Ուղղումն առաջարկել է Ադոնցը (տե՛ս նշվ. աշխ., առաջաբանը, էջ 78)։

8 Նույն տեղում, էջ 76։

9 Օրինակ՝ Խորենացին Տիգրան Նրվանյանի մասին ներբողյանը գրել է «Պիտոլից գրքի» «Սահման ներբողի» կանոններով (տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Գ, էջ 301—305)։

10 Նույնիսկ V դարի դասական գրաբարը, որ շատ ավելի հասկանալի ու պարզ է, IX—X դդ. արդեն դարձել էր սովորողի՝ ոչ խոսակցական լեզու (տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 131—132։ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 94—107, 226—227։ Է. Աղաջյան, Գրաբարի պատմության շրջանաբաժանումը, «Բանբեր նրեանի համալսարանի», 1974, № 2, էջ 77)։

11 Н. Адо́нц, նշվ. աշխ., առաջաբան, էջ 77, ծան. 4, էջ 78, ծան. 1, 2։

է, որ Ադոնցի՝ այդ կապակցութեամբ մեջբերված վերջին նախադասության շարունակության մեջ հանվանե հիշատակվում է նաև Թեոնի ճարտասանական կրթության վերաբերյալ ձեռնարկը՝ «դարձեալ և կրքական վարժից Թեոնականաց... յաւէտ իմն հմտագոյն» (էջ 101), մի բան, որ Ադոնցը չի նկատել։ Մակայն, այնուամենայնիվ, Դրասխանակերտցու ծանոթութիւնը այս գործերին չափազանց սակավ է եղել նրանցով առաջնորդվելու համար։ Մեզ մնում է փորձել մի երկրորդ բաղժ։

Դրասխանակերտցուն մի բան քաջ հայտնի էր. իր նախորդները՝ Քաջը և բանաստեղծը, արգոյակապը և զարմանալիք» (էջ 4), գերազանց տիրապետել են «քերթողական արվեստին» և գրել նրա հրահանգներով և պահանջներով (այդ է վկայում բերված գնահատականը)։ Նույն ձևով գրելու ձգտումը, վերոհիշյալ դժվարութիւնը և այս վերջին համոզումը X դարի հեղինակին կրնա՞նք հետևել մատչելի միջոց՝ փոխհատուցելու համապատասխան տեսական գրականության չմացության և անմատչելիության բացը, այն է՝ նմանվել, հետևել, ընդօրինակել «քերթողական արվեստում» կատարյալ նախորդներին։ Այդ ուղիով էլ, ինչպես կտեսնենք, ընթացել է Դրասխանակերտցին և նրա «քերթողական արվեստի» հիմնական գծերը վերհանելու համար անհրաժեշտ է համապատասխան քննութիւն կատարել։

Դրասխանակերտցու «Պատմութեամբ» ներկայացող «քերթողական արվեստի» հարցերին մինչև այժմ անդրադարձել են միայն ըստ դիպվածի՝ երբ անհրաժեշտ է եղել ներկայացնել նրա «Պատմութիւնն» ընդհանրապես¹³, կամ ժամանակակից այլ մատենագրական երկի լեզվի և ոճի հարցերի քննման¹⁴, կամ լեզվի պատմության առիթով¹⁵։ Բոլոր դեպքերում «քերթողական արվեստի» տարրեր են համարվել այն երևույթները, որոնք այս կամ այն չափով նրա «Պատմութեան» յուրահատկութիւնն են՝ ի տարբերութիւն նույն դարաշրջանի (IX—XII դդ.) մյուս պատմիչների կամ նրանց մի մասի գործերի։

Առավել հիմնավոր խոսք է ասել Մ. Աբեղյանը։ Նա այս երևույթի մեջ փաստորեն առանձնացնում է երկու հիմնական կողմ։ Առաջինը կարելի է բնորոշել որպես արդյունք ինֆլուենայն գեղարվեստական մտածողության, երբ Դրասխանակերտցին «ջանում է ըստ ամենայնի ճարտասանորեն և գեղեցիկ պատմել և իր ոճով էլ ազդել» և այլն։ Երկրորդ կողմը կարելի է համարել այն. ինչը գիտնականը կոչում է «նմանողական ոճ»՝ դրա տակ հասկանալով օգտագործումը և որպես սեփական խոսք ներկայացնելը այլ հեղինակներից փալված դարձվածների, նկարագրութիւնների, մտածողութեան ձևերի, պատկերների և այլն։ Նա ճիշտ է նշում նաև Դրասխանակերտցու սովորած «քերթողական արվեստի» դասագիրքը. «Այդ «քերթողական արվեստն» ահա սովորում էին դպրոցներում հին մատենագիրների վրա հրահանգվելով, որով և մեր հին

12 Այս հիշատակումը հավանաբար չի նկատել նաև Հ. Մանանդյանը՝ Թեոնից հետքեր կամ նրա մասին հիշատակութիւններ փնտրելիս հայ մատենագրության մեջ, նրան հայտնի են Թեոնի այս գործին ծանոթ միայն երկու հեղինակ՝ Համամ Արեւելցին՝ IX և Դրիգոր Մագիստրոսը՝ XI դարերում (տե՛ս Թեոնի հրատարակության առաջաբանը, էջ 17)։

13 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, Երևան, հատ. Գ, էջ 483—486։

14 Վ. Առաքելյան, Նարեկացու լեզուն և ոճը, Երևան, 1975, էջ 13—18։

15 Տե՛ս Ա. Արտինյանի և Հ. Աճառյանի վերոհիշյալ աշխատութիւնները, նույն տեղում։

մատենագրությունը դառնում էր նմանողության և նույնիսկ ընդօրինակման առարկա»¹⁶։

Դրասական հեղինակներից փոխառնված նկարագրությունները հետագա և ժամանակակից դեմքերի և դեպքերի համար օգտագործելու երևույթի առումով մինչև այժմ միայն ցույց է տրվել, թե ինչ է արել Դրասխանակերտցին, և դա ներկայացվել է որպես շատ հասարակ, պարզունակ, միամիտ և նույնիսկ դատապարտելի գործողություն¹⁷։ Սակայն այս երևույթը գնահատելու և նրա էությունը պարզելու համար անհրաժեշտ է ցույց տալ նաև, թե ինչպես և ինչու է նա այդ արել, որն իր հերթին ավելի առարկայական և շոշափելի հիմքեր կտա՝ այն հեղինակի պատկերացրած «քերթողական արվեստի» տարր համարելու։ Այդ նպատակով Դրասխանակերտցին ամենից հաճախ դիմել է Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը»։ Եվ դա հասկանալի է, քանի որ նրա ժամանակ հենց վերջինս էր համարվում ամենամեծ «քերթողը»¹⁸։

Երկու բնագրերի համապատասխան առնչությունների քննությունը հիմնական գծերով ներկայացնում և պարզում է խնդրո առարկա հարցի էությունը։

«Քերթողական արվեստում» վարժված Դրասխանակերտցին կարող էր անգիր հիշել V դարի պատմիչների երկերից առավել գեղեցիկ և հանձնարարելի հատվածներ և անհրաժեշտության դեպքում դրանք օգտագործել նաև հետագա ժամանակի կերպարները կերտելիս։ Քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ նա մեծ մասամբ դիմել է համապատասխան բնագրերին և ոչ հիշողությանը։

Այս հարցը կարևոր է ոչ միայն նրա իմացությունների մոտավոր չափի, մակարդակի և խորության, աշխատելու մեթոդի և «քերթողական արվեստի» նրա պատկերացումների մանրամասները պարզելու, այլ նաև փոխառված հատվածների և համապատասխան աղբյուրների բնագրական առնչության աստիճանը որոշելու համար։ Դիմենք փաստերին։

Կաթողիկոս պատմիչի նկարագրած ժամանակակից իրադարձությունների պատմության մեջ առաջին պլանի վրա և նրա ուշադրության կենտրոնում պետք է լինեին, բնականաբար, Բագրատունի թագավորները՝ Նոր թագավորական հարստության հիմնադիր Աշոտ I Բագրատունուն բնութագրելու համար նա դիմում է Խորենացու ամենասիրած պատմական հերոսի՝ Տիգրան Երվանդյանի և Սմբատ Բագրատունու կերպարներին¹⁹։

16 Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 484—485։

17 Ստ. Մախաչյանցն, օրինակ, դա համարում է «հետևանք վատ դպրոցի, անբնագատ հետևողության, անճաշակության» և սա իր հիմնական հիմքերից մեկն է համարում Դրասխանակերտցուն վերջին տեղը ղնելու մեր պատմագիրների շարքում (տե՛ս Ստ. Մախաչյանց, Մատենագիտական դիտողություններ, Երևան, 1961, էջ 209)։

18 Անկախ այն բանից, թե բանասիրությունը վերջնական ինչպիսի լուծում կտա Մովսես Խորենացի—Մովսես Քերթողհայր, կամ Քերթող փոխհարաբերությանը, մի բան պարզ է, որ IX դարում դրանք արդեն նույնացվում էին (այդ են վկայում Թ. Արծրունու վկայությունները)։

19 Օգտագործում ենք Խորենացու «Հայոց պատմության» հետևյալ հրատարակությունը՝ Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Տփլիս, 1913, աշխատասիրությանը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի (մեղբերված հատվածների և վկայակոչությունների համար՝ տեքստում փակագծերի մեջ կնշենք գիրքը, գլուխը և էջը)։

Ահա այդ պատկերը (ըստ հորենացու բնագրի տրված հերթական համարների մատնանշում են երկու նկարագրությունների նույնական համավածները, իսկ ընդգծված մասերը՝ տարբերությունները)։

ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅՈՒ

ԽՈՐԵՆԱՑԻ

6) այլ ինձ աստանօր, ոչ արդեօք այլ ինչ է բանս սիրելի, բան թէ դեգերիլ ի բանս գովեստից, որ վասն Աշոտոյ իշխանաց իշխանին են հետևումը։

1) Վասն զի ի ախ Բասեալ միջակութեան՝ Բաշահասակ էր նա և անձնեայ և թիկնաւտ և զուարթերես և մրայօն նկարէն իմն,

9) և նիշ արեան յաշսն ունելով՝ որպէս զյակինթ. կարմիր ի մէջ մարգարտի ծագեալ և վայելչացեալ գեղեցկութեանն ալեօք.

4) մեծիմաստ և քաղցրաբան,

2) և առ կերակուրս խրախճանաց պարկեշտ

8) ոչ խանդացեալ նորա ընդ լաւագոյնսն և ոչ արհամարհեալ զնուաստագոյնսն, այլ հասարակաց ի վերայ տարածէր զգզեստ խնամոց իւրոց։

7) Եւ լծակօք իմն կշռէր նախ զիւր և ապա զամենեցուն կենցաղս.

5) միանգամայն իսկ ասել, եթէ որ ինչ մարդկութեանս է պիտանի ոչ ինչ կասեցուցանէր (137—138)։

1) Զայս և որ այլ այսպիսիք բազումք, երբ մերոյ աշխարհիս խառնեալս այս և աղեբեկ ծայրի հերաց Երուանդեան Տիգրան, երեսօք գունեան և մեղուակն, անձնեայ և թիկնաւտն, առգաբարձն և գեղեցկաւոն.

2) պարկեշտն ի կերակուրս և լրմպելիս, և ի խրախճանութիւնս օրինաւոր.

3) զորմէ ասէին ի ճիւնս մեր, որք փանդըւամբն երգէին. լինել սմա և ցանկութիւնս մարմնոյ չափաւոր,

4) մեծիմաստ և պերճաբան,

5) և յամենայն, որ ինչ մարդկութեան՝ պիտանի։

6) Եւ զի՞նչ ինձ ի գիրս յայտոսիկ արդեօք իցէ բան սիրելի, բան թէ որ յաղագս սորա էին գովեստը և պատմութիւնք յերկարել։

7) Արդարադատ և հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի՝ զամենայն ուրուք զկենցաղ՝ մտացն լծակաւ կշռէր։

8) Ո՛չ ընդ լաւագոյնսն խանդայր, և ոչ զնուաստն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնարէր զխնամոցն իւրոց ի վերայ տարածանել զգետոս (Ա, ԻԴ, 72—73)։

9) Սիրելի է ինձ ասել և վասն առնն բառին Սմբատայ... որ ունէր հասակ անդամոգ համեմատ Բաշոթեանն և առաքիճնութեանն սգունքն և գեղեցկութեանն ալեօք վայելչացեալ սակաւ ինչ արեան նիշ ունելով յաշսն՝ որպէս զբազմութիւնն ի վերայ ոսկւոյ և ի մէջ մարգարտոյ ծագէր։ (Բ, ՄԲ, 181)։

Այս համագրութեան մեջ աչքի ընկնող առաջին հատկանիշը նկարագրական տարրերի խառը դասավորութիւնն է հորենացու հետ համեմատած։ Նթի այդ հաջորդականութիւնը խախտված լինելը միայն մասամբ, ապա կարելի կ'լինէր այն համարել անգիր իմացած այս նկարագրութիւնը հիշողութեամբ շարադրած լինելու արդյունք։ Սակայն հաջորդականութիւնը այնպիսի է փոխված, որ նույնիսկ ոչ մի դույզ իրար չեն հաջորդում այնպես, ինչպես հորենացու մոտ։ Սա արդեն ավելի նման է մտածված վերստին դասավորութեան։

Երկրորդ հատկանիշն այն է, որ Դրասխանակերտցին Աշոտ I-ի բնութագրի տարրերից յուրաքանչյուրը ոճով նման և մտքով նույնը թողնելով Տիգրանի և Սմբատի համար հորենացու ասած խոսքի հետ, ոչ մի դեպքում բառացի չի պատճենում։ Այստեղ ևս նկատելի է հեղինակի կատարած նպատակային աշխատանքի հետքը։ Ինչպես երևում է մեջբերումից, նա որոշ բառեր և որակումներ չի օգտագործել Աշոտի համար, որոշ բառեր և արտահայտություններ փոխարինում են հոմանիշներով (օրինակ՝ «դուարթերես և մրայօն նկարէն

իմն»՝ փոխանակ «եբեսօք գունեան և մեղուական»-ի՝ առաջինում, «յակինթ»՝ փոխանակ «դրակոնտիկոնի»՝ իններորդում, «քաղցրաբան»՝ փոխանակ «պերճարան»-ի՝ չորրորդում)։

Ուրեմն՝ կազմելու համար Աշոտ I-ի բնութագիրը Դրասխանակերտցին

ա) Գիտակցաբար ընտրել է խորենացուց երկու տարբեր հերոսների բնութագրող հարմար հատվածներ։

բ) Ամբողջը բաժանել է մանր նկարագրական տարրերի կամ միավորների այնպես, որ նրանցից յուրաքանչյուրը հնարավոր լինի օգտագործել այլ կոնտեքստում։

գ) Նկարագրական այդ տարրերը դասավորել է խորենացուց (հնարավորին չափ) տարբերվող հերթականությամբ։

դ) Այդ տարրերից յուրաքանչյուրի ներսում աշխատել է կատարել տարբեր փոփոխություններ, բայց այնպես, որ նույնը մնա միտքը և շտուժի ոճը։

Սա նշանակում է, որ այն նույն հատկանիշները, որոնց փոքր չափով զբոսնորման դեպքում կարելի կլինի մտածել, թե այս նկարագրությունը Դրասխանակերտցու հիշողության արդյունք է, հետևողականորեն դրսևորված լինելով, ենթադրել են տալիս նպատակասլաց գործողություն։

Ձուգադրված հատվածներում նմանությունները մեկնաբանման կարիք չեն ուղղում։ Փորձենք բացատրել նկատվող տարբերությունները (ընդգծված են)։ Դրսնք առաջացել են ըստ երևույթին հետևյալ պատճառներով.

1) Խորենացուն բառացի չկրկնելու ձգտումը։ Հենց միայն վերևում արդեն նկատած ձևափոխելու, կերպարանափոխելու միտումը, ինչպես նաև սեփական ճաշակը կարող էին պայմանավորել Տիգրանին և Սմբատին խորենացու տված բնութագրումներից որոշ գծերի շրջանցումը՝ Աշոտ I-ի համար։ Օրինակ, դժվար է որևէ այլ կերպ բացատրել, թե նա ինչու չունի Սմբատի համար խորենացու տեսած «որ ունէր հասակ անդամոց համեմատ քաջութեանն և առաքինութեանն ուղտոցն սրսորդ» արտահայտությունը կամ դրան համարժեք մի բան։

2) Ժամանակի բառյական նորմերին և պատկերացումներին չհամապատասխանելը, կամ սրա ավելի մասնավորված դրսևորումը, որոշ կոնկրետ և առարկայական պատճառներով։ Քննենք միայն Տիգրանի բնութագրի «զորմէ ասէին ի հինսն մեր, որք փանդոսմբն երգէին, լինել սմա և ցանկութիւնս մարմնոյ չափաւոր» գիծը, որից ոչ մի հետք չունի Աշոտ I-ի բնութագիրը։ Եվ դա հասկանալի է. նախ՝ Դրասխանակերտցու հերոսը համարյա իր ժամանակակիցն էր, և նրա մասին «հների մեջ» ասված երգերից չէ, որ հեղինակը պետք է տեղեկություններ իմանար։ Երկրորդ՝ X դարի քրիստոնեական բարոյական նորմերն ընդունող Դրասխանակերտցու համար դրվատանքի կարող էին արժանանալ ոչ թե մարմնական «չափավոր ցանկությունները», այլ դրանք ընդհանրապես չունենալը։

3) Նախօրոք բնութագրված նյութի մի մասի օգտագործած լինելը ուրիշ դեմքերի և անձանց համար։ Հովհաննես Իմաստասեր կաթողիկոսի արտաքին Դրասխանակերտցին գծագրում է այսպես. «Իսկ նորա զաւարտահասակ դիտակն իւր ես առաւել փայլուն և պաղպաջուն զգեստուր պճնաւորեալ՝ և գաղէրէկ ծաղկեալ մորուսն ոսկեփունջ կազմեալ, և զոսկիանկար գաւազանն. որ ի փայտից ուղնիաղից՝ ի ձեռն առեալ, այնպէս ապա գունեան այրն և քիկնաւէտ առ մամրապետն մտանէր» (էջ 102)։ Հնարավոր է, որ դրանցից առաջին եր-

կուսը Դրասխանակերտցիին չի վերագրել Աշոտ I-ին (տե՛ս առաջին նկարագրական միավորը), քանի որ մինչ այդ արդեն օգտագործել էր այստեղ (քիկնաւէտ—ը ավելի սովորական և հաճախ հանդիպող բառ է և հեղինակը չի խուսափել այն և՛ Աշոտի, և՛ Հովհաննես Իմաստասերի համար օգտագործելուց)։ Եթե այդպես է, ուրեմն բնական է, որ նույն այդ պատճառով էլ այստեղ օգտագործված չեն նաև առգաբարձն և գեղեցկոտն մակդիրները, քանի որ դրանք գտնում ենք Աշոտ I-ի եղբոր՝ Աբաս սպարապետի բնութագրի մեջ. «Որ էր այր ֆաջանձնեայ և քիկնաւէտ, առոյգանձն և գեղեցիկ հասակաւ, կորովի և աջողակ ի պատերազմունս» (էջ 135)։ Մակդիրների ընդգծված քառյակը, անշուշտ, պատճենն է խորենացու՝ Տիգրանի մասին ասված «անձնեան և քիկնաւէտն, առոգաբարձն և գեղեցկոտն» քառյակի։ Միայն հանուն ձևափոխության նա անձնեան դարձրել է ֆաջանձնեայ (Աշոտի համար օգտագործել է առաջին ձևը), քիկնաւէտ—ը թողել է նույնությամբ, առոգաբարձն—ի դիմաց ունենք շատ նման առոյգանձն և գեղեցկոտն—ի տեղում՝ գեղեցիկ հասակաւ։ Զի խախտված նույնիսկ հերթականությունը։

4) Օգտագործել էր նույն տեղում նույն մարդկանց համար, ինչ խորենացին։ Հետաքրքիր է դիտել, թե ինչպիսի գծերով են հանդես գալիս իրենք՝ Տիգրան Երվանդյանը և Սմբատ Բագրատունին համապատասխան տեղերում Դրասխանակերտցու մոտ։ Որքան էլ տարօրինակ է, Սմբատ Բագրատունին որպես պատմական անձ ընդհանրապես դուրս է մնացել և նրա մասին որևէ խոսք չկա։ Տիգրանը ներկայանում է միայն իր կատարած գործերի համառոտ ամփոփմամբ։ Որևէ գիծ այս ընդարձակ և գեղեցիկ նկարագրությունից Դրասխանակերտցիին չի օգտագործել նրա համար, բացի հալասարաւէր սրակումից, որն այստեղ ստացել է հալասարաւիւրուրիւն ձևը (էջ 22) և այդ պատճառով էլ այն չի օգտագործվում Աշոտ I-ի համար (համար. 7-րդ նկարագրական միավորները)։

Այս բոլորը հիմք են տալիս ասելու, որ Դրասխանակերտցիին նախօրո՛հ նախատեսել էր Տիգրան Երվանդյանի և Սմբատ Բագրատունու խորենացու բնութագրումները որպես «քերթողական» նկարագրության յուրատեսակ պաշար և կադապար՝ Աշոտ I-ի կերպարի ստեղծման համար։ Եթե որոշ գծեր անհրաժեշտ է եղել ծախսել նույն տեղում կամ ուրիշների համար, ապա արդարել է հաշվենկատորեն և աշխատել է նույնը երկրորդ տեղում չկրկնել։

Հաջորդ օրինակները ցուցադրում են հեղինակի կատարած աշխատանքի նոր կողմեր և երանգներ։

Դրասխանակերտցին, որ թեև երիտասարդ, ժամանակակիցն է ևղել Աշոտ I-ի թագավորության հաստատման, պետք է որ լավ իմանար (նաև Շապուհ Բագրատունու «Պատմությունից» և բանավոր աղբյուրներից) Բագրատունյաց հարստության հիմնադրի գործերի և սահմանած նոր կարգերի մասին։ Սակայն նա անհրաժեշտ է համարել այս դեպքում ևս դիմել խորենացուն և համապատասխան հարցերը ներկայացնել այնպես, ինչպես վերջինս՝ վաղարշակինը։ Ասել է թե կաթողիկոս պատմիչը փաստերի պակասությունից չէ, որ դիմում է «քերթողական արվեստի» միջոցներին։

Ընտրությունը պատահական չէ։ Այն պայմանավորված է նախ նրանով, որ և՛ Աշոտ I-ը, և՛ վաղարշակը թագավորում են տեական ժամանակ ինքնուրույն իշխանությունից զրկված երկրում որպես առաջին թագավորներ, որպես նոր հարստության հիմնադիրներ։

ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅՈՒՆ

ԽՈՐԵՆԱՅԻ

7) Եւ այնուհետեւ բազում և երևելի կարգս յարգարէր աշխարհի տէրութեան իւրոյ, յօրինուածս տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց,

2) և հարթահաւասար ըստ իւրաքանչիւրոցն կատարէր կարգս լեռնականաց և ջերմահովիտ բարեխառն դաշտականաց,

4) և զամենայն տափարակ տեղիս՝ ագաւակս և զոմս ղնէր. և զմարմանդս յայգիս և ի բուրաստանս զարդարէր.

8) և զամենայն որ ինչ օրէն է թագաւորութեան և որ ինչ ի թագաւորութեան և որ շուրջ զթագաւորութեամբ ոչ ինչ իւր կասեցողացանէր. և զերթէ ճարտագոյն և խռնմագոյն քան զամենայն թագաւորութիւնս գտանէր: Եւ այսպէս ի նորոգատուր քաղաքաւորեանն բարձրացուցանէր զագգս Թորգոմեան:

5) Եւ ապա ձեռն զհիւսիսական կողմամբ արկեալ ի ծործորս մեծի լերինն Կովկասու, որ ի հովիտն և ի ձորս երկայնագոյն բնակեալք էին աղգք ընդ իւրեաւ հնադանդեցոցացանէր. այլ և զաղխատուր զբնակիչն Գուգարաց և զգնդակուտ մարդիկ Ուտի գաւառի առնասարակ ընդ ձեռամբ նուանէր՝

6) ի բաց ի նոցանէ հերքելով զաւազակութիւն մարդադաւութեան, և իբրեւ օրինաւորս և հյուս զամենեան կազմէր, և առաջնորդս և իշխանս նոցա կացուցանէր (139—140):

1) Եւ այսպէս կառարեալ՝ կարգէ զկողմանս Մաժաֆայ և զՊոնտոսիս և զԵգիպտոս. դառնայ զհիւսիսեաւ առ ստորագոյն Պարսպարայ բնդ մէջ Տայոց. ի գիւղն և ի մառախլուտ տեղիս մայրեաց և ի լոռակաւս.

2) զեղեցիկ իմն կարգելով զերկիրն, հաւասարելով զլեռնայինն և զջերմահոտն և բարեխառն և ի զուգագեղեցիկ վայելչութիւն իւրոյ թագաւորութեանն.

3) ամառնային ժամանակին հովանացս պատրաստելով, յարժամ զհիւսիսեաւ երթիցէ:

4) Գոմս զերկուս տափարակսն անտառախիտս հանդերձ լերամբքն կազմելով, և որոնց տեղիս, և զջերմութիւնն Կողայ՝ ի մարմանդս այգեաց և բուրաստանաց:

5) Եւ աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն, որ ի դաշտին հիւսիսոյ և որ զստորոտով մեծի լերինն Կաւկասոյ, և որ ի հովիտս կամ էլ ձորս երկայնաձիգս խորացեալս, ի լեռնէն որ զհարաւով՝ իջեալ մինչ ի դաշտաբերանն մեծ.

6) պատուէր տալով զաւազակութիւն և զմարդադաւութիւն ի բաց քեցել յինքեաց, և հրամանաց և հարկաց արքունի հպատակ լինել. որպէս զի միւսանգամ տեսեալ զնոսս՝ առաջնորդս և իշխանս հանդերձ գեղեցիկ կարգօք հաստատեսցէ: Եւ արձակէ զնոսս հանդերձ արամբք իմաստնովք և վերակացուք յիրմէ (Բ, 2, 108—109):

7) Քանզի բազում ինչ աստ կարգաց և յօրինուածոց տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց,

8) և համայն ասել՝ օրէն թագաւորութեան, և որ ինչ շուրջ զթագաւորութեամբն—զօրաց, զօրապետաց, կողմանց կողմնակալաց և որ նման այսոցիկ (Բ, է, 109):

Վերադասավորելու և ձևափոխելու նույն երևույթներին ականատես ենք նաև այստեղ, Միայն թե այս դեպքում հնարավոր չէր փոխառնված նյութը ավելի մանր տարրերի բաժանել և խախտել դասավորութիւնը:

Հետաքրքիր է տեսնել, թե այժմ ինչ մտքեր են, որ Դրասխանակերտցին խուսափել է օգտագործել Աշոտ I-ի համար: Եթե հերոսի արտաքին և ներքին նկարագիրը կազմելիս նա կարող էր Տիգրանի և Սմբատի՝ Խորենացու բնութագրումներից ընտրութիւն կատարել առաջնորդելով նաև անձնական ճաշակով, ապա կոնկրետ գործերը նկարագրելիս հաշվի է առել օբյեկտիվ հանգամանքներու Անհրաժեշտ էր առաջին հերթին խուսափել կոնկրետ մտքերից և ընտրել ընդհանուր բնույթի մտքերը:

Խորենացուց համադրված հատվածում ընդգծված երկու այդպիսի մտքերը (1-ին կետում) և հյուսիսային շրջաններում ամառանոց կառուցելու փաս-

տը (3) չի հարմարեցրել Աշոտի համար, որովհետև նման գործեր նա չէր արել: Նույն կերպ Դրասխանակերտցին չէր կարող օգտագործել նաև այս գլխի շարունակությունը և հաջորդ է և Ը գլուխները, որոնք նույնպես ամբողջությամբ նվիրված են Վաղարշակի «թագավորական կարգեր» սահմանելու պատմությանը, սակայն ամեն ինչ պտտվում է կոնկրետ դեպքերի, դեմքերի և վայրերի անունների շուրջը: Միակ ընդհանուր բնույթի միտքը է գլխի երկրորդ նախադասությունն է, որը օգտագործել է Դրասխանակերտցին (տե՛ս 7-րդ և 8-րդ կետերը):

Սակայն Աշոտ I-ի արտաքին քաղաքականությունը հաջողություններ էր ունեցել այն նույն շրջաններում, ինչ հորենացին ներկայացնում է նաև Վաղարշակի համար: Այստեղ արդեն հնարավոր էր, առանց անտեսելու պատմական փաստերը, Վաղարշակի մասին ասվածը հարմարեցնել նաև Աշոտին (5-րդ և 6-րդ կետերը):

Կոնկրետից խուսափելու և առավել ընդհանուր բնույթի մտքերն ընտրելու անհրաժեշտության գիտակցումը հետք է թողել նաև օգտագործված հատվածների վրա: Օրինակ՝ 4-րդ կետում չկա միակ հատուկ անունը (Կողայ), զերկուս տափառակսն դարձել է ընդհանրապես զամենայն տափառակ տեղիս:

Ինչ վերաբերում է Դրասխանակերտցուց համադրված հատվածի 8-րդ կետում ընդգծված վերջին երկու նախադասություններին, ապա դրանք նորից կապված են Տիգրանի մասին հորենացու մտքերի հետ: Առաջինը՝ «և գրեթե հարստագոյն և խոհեմագոյն քան զամենայն թագաւորութիւնս գտանէր» ձևափոխված պատճենն է «քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն և արանցն այնոցիկ ամենեցուն քաջ»-ի, որն ի միջի այլոց նույնպես Տիգրանի համար չի օգտագործվել, իսկ երկրորդը՝ «և այսպէս ի նորոգատուր թագաւորութեանն բարձրացուցանէր զազգս Թորգոմեանն»՝ «պազգս մեր բարձրացոյց»-ի (տե՛ս հորենացի, Ա, ԻԴ, 71 և 72):

5-րդ կետի ընդգծված մասում արտահայտված է հեղինակի բացասական վերաբերմունքը Ուտիքի բնակիչների և Գուգարացիների նկատմամբ: Դա հորենացուց չի գալիս, այլ իրենք՝ Դրասխանակերտցունն է: Նա մի քանի անգամ ևս տարբեր առիթներով իր հակակրանքն է արտահայտում այդ շրջանների բնակիչների նկատմամբ, մեղադրում նրանց Բագրատունի թագավորներից ապստամբելու կամ դավաճանության մեջ:

Սմբատ I-ի մեջ Դրասխանակերտցուն հատկապես հուզել է նրա եղբրական մահը: Նրա կրած տանջանքները, մահվան և հատկապես խաչվելու պատմությունը կարող էին հիմք տալ Դրասխանակերտցուն կերտելու նրա կերպարը վկայաբանական գծերով: հորենացու «Պատմությունը» չունի որևէ մեկի համար շարժարանների մանրամասն նկարագրություններ, մինչդեռ Աղաթանգեղոսի՝ Գրիգոր Լուսավորչի շարժարանների հայտնի պատմությունը հիանալի օրինակ կարող էր լինել այս դեպքում: Համեմատությունը բացահայտում է այդպիսի կապեր: Եվ այնուամենայնիվ, Սմբատ I-ի վկայաբանական կերպարը ամբողջացնելու համար Դրասխանակերտցին նորից դիմում է հորենացուն:

Իր ամբողջ պատմության ընթացքում պատմահայրը ոչ մի անգամ հրաշքը չըջորեն չի ներկայացնում իրականության փոխարեն: Միակ դեպքը իր ուսուցչի՝ Մեսրոպ Մաշտոցի թաղման ժամանակ լուսեղեն խաչի ուղեկցության տեսարանն է: Բայց սյդ մասին էլ չի ասում, թե իր աչքով է տեսել կամ որ համոզված է դրանում, այլ որ լսել է «ի բաղմաց և ի հաւաստի արանց»:

Դրասխանակերտցին չի վրիպել այս միակ դեպքն օգտագործել Սմբատի համար (ընդգծված են նմանությունները)։

ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅԻ

ԽՈՐԵՆԱՅԻ

Իսկ ի տեղուդ անդ, յորում զերանելի և զերանելի թագաւորն ընկաւաւ ի փայտին բարձու պրկեալ էին՝ ռմանք ի հաւատացելոց և յանհաւատից ևս ասէին տեսանել յոյս նաւագայթաւէտ վառեալ իբր զնրազ ճանաչաւոր նշողիւմ հաւատս ի վեր քան զզուրկ քաւտոբին կշռադատեալ հաւասար նմին։ և որք ասէին զայս՝ ստուգութեամբ իմն հաւաստի զբանն առնէին, եւ սակս այսորիկ նշանաց ռմանք ի հեթանոսաց անտի ի հաւատս քրիստոնեականս զանձինս վերածէին, և աւագանի լուսով վերստին ծնանէին ի հոգին Սուրբ Աստուծոյ (կշ 240—241)։

Որպէս լուայ ի բաղմաց և ի հաւաստի արանց, նթէ եկաց լոյս շողապէս ընդ ազօտ նշան խաչի ի վերայ տանն, ուր երանելին զնոգին աւանդեաց. ոչ փոյթ ընդ փոյթ լեալ էանց ծագումն, կամ սակաւուց տեսանելի, այլ ամենայն բազմութեանն,

մինչև յառվից մկրտեալ լանճաւատից (Գ, ԿԼ, 357)։

Դրասխանակերտցին, որ ոչ միայն հավատում է հրաշքների, այլև սիրում է ամեն ինչ հրաշքներով բացատրել, մեխանիկորեն կրկնել է նույն միտքը՝ «և որք ասէին զայս՝ ստուգութեամբ իմն հաւաստի զբանն առնէին» ձևով։ Որ առ իսկապես նույն մտքի միայն մեխանիկական կրկնությունն է և ոչ նույնպիսի մտահոգություն ունենալու արդյունք՝ վկայում է հենց հաջորդ նախագատությունը, որը նույնպես հրաշք է ներկայացնում. «Վասն զի հող երկրին, յորում ի պատուական մարմնոյն աւիշք որ անտի կաթեալ իջեալ էր, բազում բժշկութիւնս հիւանդաց և վտանգելոց և ախտաժետաց կատարէր», բայց այս անգամ հեղինակն ուրիշի չի վկայակոչում, այլ վկայում է անձամբ. «Եւ զորս աշօք իսկ տեսեալ է մեր»։

Հայոց թագավոր Աշոտ II-ի և նրանից ապստամբած Ուտիքի իշխան Մովսեսի հակամարտության ու պատերազմի նկարագրությունը Դրասխանակերտցին ամեն կերպ աշխատել է տեղավորել և ներկայացնել խորենացու Հայկի և Բելի գեղեցիկ պատմության կաղապարում։ Սա նախորդ դեպքերի հետ համեմատած յուրահատուկ է նրանով, որ այստեղ շահագնադրողը և ապստամբողը բացասական կերպար է, իսկ ապստամբությունը ճնշողը՝ դրական, մինչդեռ խորենացու մոտ ճիշտ հակառակն է։ Դրասխանակերտցին անհրաժեշտաբար նրանցից յուրաքանչյուրի համար մի դեպքում պետք է հարմարեցնէր Հայկի և նրա զորքի մասին ասվածը, մի դեպքում՝ Բելի։

Ահա պատգամախոսության և զորաշարժի տեսարանը (ընդգծում ենք նրամանությունները)։

ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅԻ

ԽՈՐԵՆԱՅԻ

3) Իսկ Մովսիսի տեսեալ զբազմութիւն զօրացն տարմարար հորդան տունալ ի վերա ևորա՝ ապա և նա զուսմարտակ մեծ առնէ յանյուզն և աննոռնի զօրաց, զրեթէ իբրև զյուրձանս ինչ ուղիսից ընդ գառ ի վայր հեղեալ, որք և ընդվզեալ փութային հանել մերձել զթագաւորն իւրեանց։

1) ... ի հաստատել Տիտանեանն Բելալ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ռմն յորդոց իւրոց առ Հայկ արամբ հաւատարմօք, զալ նմա ի ննա-զանդութիւն և կեալ իաղադութեամբ։ յձնա-կեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամա-նեաց. այլ ջեռուցեալ մեղկեա զցրտութիւն

1) Իսկ նա պատգամ առ Մովսէսն յղէր. գառառացեալ հպարտութիւն բարեացն ջնոցանել՝ և զալ ի ճնազանդութիւն և կեալ ի խաղաղութեան և ի հանդարտութեան:

2) Բայց նա յաւէտ իմն խրոխտ խոտաւեամբ զպատասխանիս պատգամացն դարձուցանէր (էջ 302):

սառնացեալ քն հպարտացեալ բարուցդ, և ճնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտութեան. որք չաճոյ է քեզ յերկիրս իմում բնակութեանս:

2) Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն Բելայ՝ խստութեամբ պատասխանեաց:

3) Ապա զօրածոզով լինի ի վերա նորա Տիտանեանն Բէլ ամբոխիս չեռեակ զօրաց. ... Իսկ Բէլն, յանդուգն և անճոռնի զօրութեամբ ամբոխին, որպէս յարձան ինչ սաւառիկ ընդ զառ ի վայր հեղեղեալ՝ հուրայր չասանել ի սահմանս բնակութեանն Հայկայ... (Ա, ԺԱ, 34):

Նույնն է նաև ճակատամարտին նախապատրաստվելու և ճակատամարտի նկարագրութիւնը.

ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻ

4) Ապա խռնեմ և ուշիմ քազաւորն չանդերձ իշխանան Սահակաւ կուռ վառեալ զօրս

7) Իւրեանց յաղեղն և ի սուսեր և ի աէգ ճիգակաց՝ արս ընտիրս հոյակապս, առաջինս [ուղղելի՛ աջինս] և յանկելին կազմէին:

5) և շուեալ իբրև զհրոսակ իմն վաղվաղակի հասանէին յափն ձորոյն, յորում ամրացեալ կայր Մովսէս համագունդ իւրայօքն զօրօք:

8) և անդ ապա անագին իմն զդրդմամբ շահատակեալ անս պակուցանօղս ի վերայ ճոցա ճեղուին:

6) Իսկ զայնպիսի ոյժ պնդութեան տեսեալ զօրացն Մովսիսի՝ յանկարծակի ցան և ցիր այսր անդր յարձակմամբ փախսաէի հետանային ուրոյնանային՝ միայն թողլով զՄովսէսն (էջ 302—303):

ԽՈՐԵՆԱՑԻ

4) Աստ ուշիմ և խոհեմ սկայն, քաջազանգուրն և խայտակնն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս...

5) Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէզս՝ հասանն ի միջոց ինչ դաշտան՝ լերանց բարձրագունից:

6) ...ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով:

7) ... կարգէ զԱրամանեակն երկու եղբարբք ընդ աջմէ. և զԿաղմոս և զԱյլս երկուս յորդուց իւրոց ի ձախմէ, զի արբ կորովք էին յաղեղն և ի սուսեր. և ինքն առաջի և զԱյլս հրոսակին զկնի իւր կարգեաց...

8) Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս՝ անագին զդրդմունս ի վերա երկրի առնէին շահատակելով, և անս պակուցանօղս տարագով յարձակմանցն սկայագունեմ զմիմեամբք արկանէին (Ա, ԺԱ, 35—36):

Նման է նաև վերջաբանը, այն տարբերութեամբ միայն, որ Մովսեսը փախչում է, իսկ Բելը սպանվում է Հայկի ձեռքով: Սակայն երբ Աշոտին հայտնի է՝ դառնում, որ պարտված հակառակորդը մտադիր է նոր դաշնակիցներ գտնել և շարունակել պայքարը՝ հետապնդում է նրան և բռնում: Եվ նույնիսկ այդ բռնելու (ոչ սպանելու) տեսարանը շատ նման է Բելի սպանութեան տեսարանին.

ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻ

Ձայն անցս աղէտի ընդ հուպ զգացուցեալ քազաւորին՝ վաղվաղակի զհետ աճապարեալ կրթի. և ձի ի ներքս տարեալ ի սաստիկ վառեալսն և ի կազմեալսն Մովսիսի և մօտ առնա հասեալ և զաղուցեալ գլխանոցն երկաթի վաղերբ դիպեցուցեալ՝ շեշտ ընդ մէջ ճեղգէր զամուր գլխանոցն և յերկիր գնա հարստեալ (էջ 303):

ԽՈՐԵՆԱՑԻ

Ձայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ գինքն, մօտ հասանէ յարձայն, իի բարձէ զլայնալիճն, զիպեցուցանէ զերեքթեւեան կրծից տախտակին և շեշտ ընդ մէջ ընդ կանցն քափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաֆն (Ա, ԺԱ, 36):

Այս համադրությունը ևս ներկայացնում է Դրասխանակերտցու աշխատելու նույն սկզբունքներն ու մեթոդները, ինչ քննված նախորդ դեպքերում: Առանձնահատկությունն այն է, որ հեղինակն իր իսկ ժամանակ տեղի ունեցած կոնկրետ դեպքն է աշխատում տեղադրել խորենացու կաղապարում: Բնական է, որ նա Աշոտ I-ի և Ուտիքի իշխանի հակամարտությունը և պատերազմի մանրամասնիքը իմացել է շատ ավելի չափ և իրական գծերով, որոնցից այստեղ ներկայանում են հիմնականները՝ Սահակ իշխանի դաշնակցությունը և օգնությունը Աշոտին (որ տեղադրված է Ճիշտ այնտեղ, որտեղ խորենացու մոտ Հայկի որդիներն ու թոռներն են ներկայանում որպես նրան օգնական), Մովսեսի նախ՝ փախուստը պարտվելուց հետո, ապա բռնվելը և կուրացվելը և այլն: Հայկի նետ ու աղեղի փոխարեն Աշոտի ձեռքում վաղը դնելը պայմանավորված է, անշուշտ, X դարում, գոնե թագավորների համար, զենքի այդ տեսակի գործածության փաստով: Մինչդեռ բոլորովին պարտադիր չէ, որ Աշոտն անձամբ մենամարտած լիներ հակառակորդի դեմ և վերջինս իսկապես վաղուով վիրավորված լիներ, որպեսզի Դրասխանակերտցին այդպես գրեր: Այստեղ կարևոր է այն, որ «քերթողական արվեստով»՝ այսինքն խորենացու նման զրիւու ձգտումը կարող էր հեղինակին մղել փաստը ձևափոխելու կամ չիմացածը մանրամասն, որպես ականատես ներկայացնելու: Ակնհայտ է, որ Դրասխանակերտցին պատմական փաստի գծերը պահպանելու հետ ձգտել է մանրամասնելու փաստը ներկայացնել նույն ձևի մեջ և նույն գույներով, ինչ Հայկի և Բելի սլատերազմը: Ինչքան ավելի խիստ հետևեր հեղինակն այս սկզբունքին, այնքան ավելի շատ իրական գծեր կարող էին զոհ գնալ գեղարվեստականացմանը:

Այսպիսով, Բագրատունի առաջին երեք թագավորների կերպարները Դրասխանակերտցին անհրաժեշտ է համարել առատորեն սնել հենց խորենացու արվեստի ընձեռած միջոցներով: Սա նախ ցուցադրում է նրա աչքում պատմահոր և նրա «Պատմության» ունեցած բարձր համարումը:

Սակայն ի՞նչ հիմքի վրա կարելի է այս երևույթը դիտել որպես Դրասխանակերտցու պատկերացրած «քերթողական արվեստի» տարր: Մինչև այժմ այդպիսի հիմք է համարվել այս հատկանիշի առավել ցայտուն արտահայտված լինելը նրա «Պատմության» մեջ՝ կապված «քերթողական արվեստով» գրելու հեղինակի խոստման հետ: Փորձենք ներկայացնել ավելի առարկայական և շոշափելի հիմքեր:

Բագրատունի առաջին երեք թագավորներից ամենից համառոտ նա ներկայացնում է Աշոտ I-ի ժամանակաշրջանը և գործունեությունը, սակայն նաև ամենից գունեղ պատկերում է նրա անձը և տալիս գործունեության ընդհանուր բնութագիրը: Համառոտ լինելու պատճառը հեղինակը հայտնում է մի քանի անգամ. Շապուհ Բագրատունին արդեն գրել էր Աշոտ I-ի և նրա ժամանակաշրջանի մանրամասն պատմությունը որպես ականատես, և ինքը ավելորդ է համարում երկրորդ անգամ նույնը կրկնել, սակայն խոստանում է համառոտ ներկայացնել՝ ընդհանուր պատմության կապը շրջահատելու համար (տե՛ս էջ 7, 111, 131—132, 141): Այս համառոտ շարադրանքի հիմնական մասը Աշոտ I-ի կերպարի բնութագրումն է, որ համարյա ամբողջությամբ իրականացվում է խորենացու միջոցներով: Պարզ զգացվում է, սակայն, որ նա զոհ է եղել Շապուհի «Պատմության» տրամադրած փաստական նյութի առատությունից, նոր բան չի ունեցել դրան ավելացնելու: Իր իսկ վկայությամբ Շապուհը

պատմել է Աշոտ I-ի նաև «զգոլութիւնս և զքաջութիւնս և զհրոսմունս» (էջ 132), «զիշխանական պատմութիւնն և զթագաւորացն զհանգամանացն զկարգս» (էջ 131), «գործոց և զգնացից և իմաստից և մրցանաց և շինութեանց և խաղաղութեան հանդէս» (էջ 7): Այսինքն այն հարցերի մեծ մասը, որոնք ներկայացնում է խորհրդանշաբան օգնութեամբ: Նապուհի «Պատմութեան» միակ թերութիւնը նա համարում է «ըստ քերթողական հրահանգացն» գրած շինելը: «Ստուգութիւն սահմանական բանի բացատրութեան և զբոլորովին բաժանումն ապացուցից ոչ կարացեալ ըստ քերթողական հրահանգացն համառոտաբար ընծեռել» (էջ 131—132): Այս պակասի մի կարևոր գիծը լրացնելուն է նպատակաւորւում եղել, անշուշտ, Աշոտ I-ի համար խորհրդանշաբան ներկայանակից այսպես առատորեն օգտւելը:

Նմանողութեան այս երևույթը միայն Դրասխանակերտցուն և նրա ժամանակին չէ, որ հատուկ է: Հիշենք հենց Մովսէս խորհրդանշաբան «Պատմութեան» դրսևորած կապերը Կեղծ Կալիսթենեսի «Վարք Ալեքսանդրի» գործի հետ: Վերջինս նրա համար եղել է «ոճական և հռետորական նյութի շտեմարան»²⁰: Բնական է, իհարկե, որ այս երևույթը տարբեր ժամանակներում և տարբեր հեղինակների մոտ բացարձակապես նույն բովանդակութիւնը, կարևորութիւնը, նպատակադրումը և անհրաժեշտութիւնը չպետք է ունենար: Բայց որ այս երկու դեպքում անպայման զուգահեռ պետք է անցկացնել, կասկածից դուրս է: Այն ունեցել է իր սկիզբը և զարգացման ընթացքը, ավանդւել է որպէս «քերթողական արվեստի» մի գիծ: Նույնպիսի մի գիծ մեծ չափով բնորոշ է նաև ռուսական միջնադարյան մատենագրութեանը²¹:

Նմանողութեան քննված երևույթը, որպէս «քերթողական արվեստի» մաս, փաստորեն նաև Դրասխանակերտցու աշխատելու մեթոդի կարևոր տարրերից է: Դրա հետևանքով տարբեր տեղերում և տարբեր չափերով շղարշվում է ներկայացված և՛ ժամանակակից պատմական նյութը, և՛ ավելի հին շրջանների մասին աղբյուրներից քաղված վկայութիւնների IX—X դդ. վիճակը: Ուստի այս և այսօրինակ հարցերի ամբողջական ուսումնասիրմամբ միայն ավելի վստահ կարելի է հենվել նրա «Պատմութեան» տվյալների վրա:

20 Գ. Սարգսյան, Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսէս խորհրդանշաբանի մոտ, «Բանբեր Մատենադարանի», № 3, էջ 42: Նույնի՝ Մովսէս խորհրդանշաբան «Հայոց պատմութեան» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 136—147: Այս փոխհարաբերութեան մանրամասն պատկերը տե՛ս Զ. Տաշյան, Ուսումնասիրութիւնը ստոյն Կալիսթենեսի Վարք Ալեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 42—84:

21 Д. С. Лихачев, Поэтика древнерусской литературы, М., 1979, էջ 16 և հետևյալս, «Нестилизационные подражания» ենթաբաժինը, էջ 184—208:

ОБ «ИСКУССТВЕ ПОЭТИКИ» ИОАННЕСА ДРАСХАНАКЕРТЦИ

А. Б. САРГСЯН

(Резюме)

В своей «Истории Армении» Иоаннес Драсханакертци неоднократно говорит о том, что историю можно излагать двояко — простым слогом и применяя «искусство поэтики». Он сам является приверженцем второй манеры. В арменистике уже отмечалось, что при изложении событий своей эпохи Драсханакертци часто обращается к описаниям армянских историков V века. Этот факт рассматривался либо как следование образцам (М. Абебян), либо как простой перенос (Ст. Малхасянц). Анализ образов современных историку лиц (Ашот I, Смбат I, Ашот II) показывает, что Драсханакертци характеризует их не исходя из правил «искусства поэтики», а пользуясь спецификой описания героических личностей у Мовсеса Хоренаци. Но это не калькирование, а сложное творческое осмысление заимствований. При этом историк исходил из собственных эстетических взглядов, а также учитывал нормы представляемого им «искусства поэтики». Иоаннес Драсханакертци старается показать историческую действительность, хотя и находится в рамках художественных представлений Хоренаци.